որդ Նորին, երրորդն 'ի Հռոմ առ Ժողովն Կարտինալաց, և զմիւսն առ դեսպանն Գաղղիոյ 'ի Կոստանդինուպոլիս, զորոց զպատճէն միոյն և եթ ունիմք 'ի ձեռին զոր և կարդեսցուք աստ 'ի ստորեւ։ Պատճէն թղթոյն Գրիգորի առ դեսպանն Գաղղիոյ։

Ամենաբարեպաշտի և Քրիստոսասիրի ծայրագոյն դեսպանի Ֆրանցայու ուղղափառ Արքայի, և պակի պարծանաց ամենայն թագաւորաց գերազնիւ և քաջաշուիղ հրեշտակի Բաստելլայի. 'ի Տէր Գրիգոր վարդապետէ եւ Արք եպիսկոպոսէ և Պատրիարքէ սրբոյ քաղաքիս Երուսաղէմի, յոյժ սիրով ողջոյն եւ առաքելական օրհնութիւն յայտարարութեամբ։

Բանզի արդարեւ մեծ ստացաւ զպատիւ ճոխութեան աստուածասէր նախնին քո Վիլլանովայն, մինչ 'ի ժամանակի խռովութեան միջնորմ եղեւ խաղաղութեան 'ի մէջ մեր և Ցունաց, եւ 'ի մշտնջենաւորս ստացաւ զմեզ աղօթողս վասն ինքեան, և արդարեւ իւրում արարելոյ խաղաղութեան զամենաբարեպաշտութիւնդ եթող յանձանցիչ և խնամածու եւ աւանդապահ, որ ոչ պակաս քան զնոյն ընդունելոց է աստուածասիրութիւնդ զգովութիւն և զաղօթս 'ի մէնջ՝ եթէ զխաղաղութիւնն զայն հաստատ պահիցէ. քանզի 'ի զրկիլ մեր յամենայնի յայլոց ազգաց, զիրաւունս դատանէաք 'ի Հռոմայեցւոցդ աստուածահաստատ թագաւորութենէ, որ այս եթէ յայլոց թագուն իցէ՝ 'ի խորհրդական ատենադպրէ ձերմէ 'ի Բերսոնարէ և 'ի Նրբամիտ մեսիս Նարիէն չէ ծածուկ։

Թէ որպէս 'ի ժամանակս լուսահոգի Պատրիարք եղբօր մերոյ՝ աղաչանօք մեր և նորա 'ի դուռ շարժեցաւ գթած Կայսրն Ֆրանցայու՝ աղաչանօք դերապայծառ Իշխանաց Իշխան Տեառն մերում Կարտինալ Ֆլորիայ՝ իցէ թէ եւ Աստուածասիրութիւնդ քաջ տեղեակ իցէ, մինչ էրն 'ի Վիրսալիա 'ի թագաւորական քաղաքի։

Արդ՝ որ մեք երբեմն զրկեալ յայլոց՝ առ գթած և իրաւարար թագաւորութիւն ձեր բաղձէաք, 'ի Նարդեանս 'ի Ս. Բաղաքս 'ի սաղրելոյ արբանեկացն բանսարկուին, ոչ գիտեմք թէ վասն ո՞յր պատճառի առ 'ի զրկիլ դիտեալ լինիմք յամանց 'ի ձերոցդ կարգաւորաց՝ զոր ոչ այլ իւիք՝